



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

---

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО  
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

## СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

### COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

#### 1.4 (30)

##### **Общественные и гуманитарные науки**

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

##### **Humanities and Social Sciences**

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS  
2019

## ԵՊՀ ՌԻԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

### 1.4 (30)

#### **Հասարակական և հումանիտար գիտություններ**

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

**Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**Издаётся по решению Ученого совета ЕГУ**  
**Published by the Resolution of the Academic Council of YSU**

**Խմբագրական խորհուրդ՝**

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան  
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան  
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան  
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան  
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան  
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան  
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան  
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան  
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան  
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան  
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան  
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան  
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան  
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան  
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան  
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան  
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

**Редакционная коллегия:**

д.ф.н., проф. Д. Петросян  
д.ф.н., проф. Л. Матевосян  
д.ф.н., проф. Ю. Аветисян  
д.ф.н., проф. А. Мурадян  
д.ф.н., проф. В. Арутюнян  
д.п.н., проф. Г. Аванесян  
д.и.н., проф. С. Мкртчян  
д.э.н., проф. А. Мнацаканян  
д.э.н., проф. А. Саргсян  
д.п.н., проф. Г. Керян  
д.ф.н., доц. Ш. Паронян  
к.ф.н., доц. Н. Варданын  
к.ф.н., доц. В. Егиазарян  
к.э.н., доц. К. Хачатрян  
к.ф.н., ассист. Н. Погосян  
к.ю.н., ассист. В. Григорян  
к.ю.н., ассист. Т. Суджян  
к.ю.н., ассист. А. Тавадьян  
к.п.н., ассист. Д. Саргсян  
к.и.н., ассист. Р. Карапетын  
к.ф.н., ассист. К. Яралян

**Editorial Board**

DSc, Prof. D. Petrosyan  
DSc, Prof. L. Matevosyan  
DSc, Prof. Y. Avetisyan  
DSc, Prof. S. Muradyan  
DSc, Prof. V. Harutyunyan  
DSc, Prof. H. Avanesyan  
DSc, Prof. S. Mkrtchyan  
DSc, Prof. H. Mnatsakanyan  
DSc, Prof. H. Sargsyan  
DSc, Prof. T. Keryan  
DSc, Associate Prof. Sh. Paronyan  
DSc, Associate Prof. N. Vardanyan  
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan  
PhD, Associate Prof. K. Khachatryan  
PhD, Assistant Prof. N. Poghosyan  
PhD, Assistant Prof. V. Grigoryan  
PhD, Assistant Prof. T. Sujyan  
PhD, Assistant Prof. A. Tavadyan  
PhD, Assistant Prof. D. Sargsyan  
PhD, Assistant Prof. R. Karapetyan  
PhD, Assistant Prof. K. Yarlyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am


**19-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋՍԵՐՆԴԱՅԻՆ  
ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ ՐԱՖՖՈՒ «ՀԱՅ  
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Հայ սոցիոլոգիական մտքի զարգացման հնարավորություններին առնչվող խնդիրները ցայսօր արդիական են: Մասնավորապես, ուշադրության են արժանի ազգային սոցիոլոգիական ավանդույթի (այս դեպքում՝ «ազգային-ազատագրական պայքարի» հայեցակարգման) վերաիմաստավորման խնդիրները, որոնք նպատակ ունեն բացահայտելու հայ սոցիոլոգիական մտքի հետագա զարգացման հեռանկարները:

Եթե այդ մտքի զարգացման հիմք ընդունենք 19-րդ դարի հայ հասարակագիտական-սոցիոլոգիական ավանդույթի շրջանակներում ձևավորված մոտեցումները, ապա առաջնային խնդիր է դառնում վերջիններիս հիմքերի վերհանումը: Մասնավորապես, ուշադրության են արժանի ժամանակի սոցիալական մտքի հիմնարար կատեգորիաներ համարվող, այն է՝ ազգի և սերնդի տեսական հայեցակարգման ուղղությունների վերլուծությունը: Սրանք այն հասկացություններն են, որոնք ընկած են այդ ժամանակաշրջանի հայ իրականության վերարտադրության հիմքում: Ազգ-սերունդ հարաբերակցության խնդրի մեկնաբանություններ կարող ենք տեսնել հատկապես Րաֆֆու «Հայ երիտասարդությունը» աշխատությունում [1]: Այն, ըստ էության, փորձ է նորովի մոտենալ 19-րդ դարի հայ իրականության իմաստավորմանն ու ներազգային գործընթացների ընկալմանը: Փորձ է արվել քննել այդ շրջանի հայ իրականությանը հատուկ ներսերնդային և միջսերնդային գործընթացներն ու փոխհարաբերությունները՝ առաջ քաշել տեսական այնպիսի հիմնավորումներ, որոնք թույլ կտան մեկնաբանել ներազգային գործընթացները՝ դասակարգելով սոցիալ-պատմական և տարածաժամանակային կոնկրետ համատեքստում: Հետազոտության հիմքում ընկած է «երիտասարդություն» հասկացությունը՝ իբրև սերունդ դիտարկվելով՝ թե՛ ներսերնդային դինամիկայի, և թե՛ միջսերնդային հարաբերությունների չափումներում: Րաֆֆին առանձնակի կարևորության է արժանացնում երիտասարդության խորքային հետազոտությունը՝ նշելով, որ այն ոչ միայն «թարմ ուժ» է, այլև տվյալ ազգի առաջընթացի ու ապագայի գրավականը: Այս տեսական մոտեցման հիմքում ընկած է ռոմանտիկ-պատմական ուղղությունը, որի շրջանակներում ներսերնդային և միջսերնդային գործընթացների մեկնաբանություններում մեծ է մշակույթի տեղն ու դերը: Սա թույլ է տալիս ոչ միայն այդ գործընթացները դիտել այնպիսի մակրոսուբյեկտիվ գործոնների ազդեցության տակ, ինչպիսին մշակույթն է, այլև սոցիալական տարածաժամանակային որոշակի կապի մեջ [2]:

19-րդ դարի հայ երիտասարդության ներսերնդային գործընթացների մեկնաբանմանն առնչվող տեսական մոտեցումներում լայնորեն կիրառվում է համեմատական մեթոդը: Փորձ է արվում քննելու այդ սերնդի բազմաթիվ շերտավորումները, ինչպես նաև պարզելու հայ երիտասարդության ձևավորման և կայացման գործընթացը միջսերնդային փոխազդեցությունների միջոցով: Հայ երիտասարդության շերտավորված բնույթն առավել ակներև է գյուղաբնակ և քաղաքաբնակ հայ երիտասարդության տարանջատման պատճառով: Այս տարանջատումը հիմնվում է այն հատկանիշի վրա, որի միջոցով հասկանալի է դառնում, թե ինչու է ներսերնդային դինամիկայի մեկնաբանման համար կիրառվում համեմատական մեթոդը: Խոսքն, անշուշտ, սոցիալական դիրքի մասին է [3]: Մասնավորապես, խոսելով 19-րդ դարի գյուղաբնակ հայ երիտասարդության մասին, անհրաժեշտ է նշել, որ այն միջսերնդային հետֆիզուրատիվ հարաբերությունների արդյունք է: Այս երիտասարդությունը ձևավորվում և կայանում է ավանդական նորմերի հիման վրա՝ կարևորելով տարեց մարդկանց փորձը և սոցիալականացման միջսերնդային ուղղվածությունը: Նյութական ոչ բավարար ապահովվածությունը ստիպում է երիտասարդությանն առավել շատ ժամանակ հատկացնել գյուղատնտեսական գործունեությանը, քան ուսմանը: Արդյունքում հասարակության մեջ գերակայում է առավելապես գյուղատնտեսական տիպի երիտասարդությունը, և ոչ՝ կրթված: Այսպիսի պայմաններում գյուղաբնակ հայ երիտասարդությունը չի կարող արագ զարգանալ, քանզի փոփոխվող գործընթացների նկատմամբ ճկուն չէ: Ինչ վերաբերում է քաղաքաբնակ հայ երիտասարդությանը, կարելի է նշել, որ այն միջսերնդային կոնֆիզուրատիվ հարաբերությունների արդյունք է, որը հիմքում ընկած է պրեֆիզուրատիվ բնույթը, քանզի հիմնվելով բացառապես ներկայի վրա՝ հրաժարվում է նախկին փորձից և նորմերից: Այն վերածվում է յուրահատուկ «հակամշակույթի», որը միջոցներ չի ձեռնարկում բարձրագույն կրթություն ստանալու համար՝ հակառակ նյութական ապահովվածությանը [4]: Ներսերնդային ֆիզուրացիաների այսպիսի բազմազանությունն իրապես արտահայտում է պատմական փորձի և դրա կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ նիցշեականության հիմնարար սկզբունքները [5]:


Սա է հիմնական այն շերտավորումը, որին ենթարկվել է 19-րդ դարի հայ երիտասարդությունը: Գյուղաբնակ և քաղաքաբնակ հայ երիտասարդներին կարելի է դիտարկել իբրև մեկ սերնդի մեջ գործառող առանձին միավորներ, որոնք, չնայած պատկանելով սոցիալ-պատմական միևնույն տարածությանը, չեն մասնակցում «ընդհանուր բախտին»: Ներսերնդային այս երկատվածությունն առավել հասկանալի է դառնում միայն այն ժամանակ, երբ քննության ենք առնում հարաբերականորեն մեկուսացված այդ ներսերնդային խմբերի կառուցվածքային հիմքերը՝ «էնտելեխիաները»: Դրանք, ըստ Մանհեյմի, պինդերյան մտածողության համաձայն ներսերնդային նպատակադրումներ են, որոնք ձևավորում են տվյալ սերնդի աշխարհընկալումը [2] (Գրաֆիկ 1):



**Գրաֆիկ 1.** Գյուղաբնակ երիտասարդության ֆիզիոլոգիկ կառուցվածքը 19-րդ դարի հայ իրականությունում

Ներսերնդային էնտելեխիկ կառուցվածքի հետազոտությունից պարզ է դառնում, որ գյուղաբնակ և քաղաքաբնակ հայ երիտասարդության էնտելեխիկները բնավ նույնական չեն, քանի որ առաջինի դեպքում էնտելեխիկն ունի առավելապես «պահպանողական», իսկ երկրորդի դեպքում՝ «ազատական» բնույթ: Սակայն անհրաժեշտ է նշել, որ այս երիտասարդությունները, հակառակ էնտելեխիկ տարբեր հիմքերի, այնուամենայնիվ, մեկ միասնական սերունդ են կազմում: Այն էնտելեխիկները, որոնք այդ սերունդների տարբերակման հիմքն են, ընդհանուր էնտելեխիկ կամ ընդհանուր հիմք են երկու կառուցվածքների միջև միավորման եզրեր գտնելու տեսանկյունից:

Այս կառուցվածքային տիպերի միասնականության հնարավորությունը հանգեցնում է սերնդի՝ որպես մեկ միասնական սոցիալական երևույթի տեսական մասնավորեցմանը, ըստ որի՝ այն չի կարող համարվել սոցիալական խումբ, քանզի չի ստեղծվում կոնկրետ նպատակների և սոցիալական կապերի հիման վրա: Միասնականության այս հնարավորությունը թույլ է տալիս երիտասարդությանը՝ որպես մեկ միասնական սերնդի, դիտել տարեց սերնդի հետ փոխհարաբերությունների մակարդակում, որտեղ ի հայտ են գալիս այդ հարաբերությունների արդյունքում ձևավորված այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ մշակութային գործընթացներում մասնակիցների նորամուտը, նախկին մասնակիցների «հեռացումը», պատմական կոնկրետ գործընթացին սահմանափակ ժամանակամիջոցում մասնակցությունը, կուտակված մշակութային ժառանգության փոխանցումը մի սերնդից մյուսին և անցման անընդհատության ապահովումը [2]: Վերլուծության էնտելեխիկ մեխանիզմը թույլ է տալիս ներսերնդային և միջսերնդային դինամիկ գործընթացները դիտել իբրև այդ սերունդներին հատուկ էնտելեխիկ հիմքերի փոխհարաբերման գործընթաց (Գրաֆիկ 2):



**Գրաֆիկ 2.** Սերնդի էնտելեխիկ կառուցվածքը

Միջսերնդային փոխհարաբերությունները չեն ընդհատվում, մշտապես տեղի է ունենում փորձի և հիշողության շերտավորում: Հենց սա է պայմանավորում հայ երիտասարդության ձևավորումն ու կայացումը: Փորձի և հիշողության շերտավորումը, որը կարելի է դիտել իբրև տարեց սերնդի՝ երիտասարդ տարիքում կուտակած փորձ, դիալեկտիկ փոխհարաբերությունների միջոցով կարող է ազդեցություն ունենալ տվյալ երիտասարդության ներկա փորձի վրա: Փորձի և հիշողության շերտավորման աստիճանն ուղղակիորեն կապված է միջսերնդային այն փոխհարաբերությունների տիպից, որը որդեգրել են փոխհարաբերվող սերունդները:

Մասնավորապես, պրեֆիգուրատիվ փոխհարաբերությունների տիպի դեպքում, փորձի և հիշողության շերտավորումը գտնվում է ցածր մակարդակի վրա, քանզի տվյալ ժամանակաշրջանի երիտասարդությունը ժխտում է անցյալի փորձն ու նորմատիվային չափանիշները:

Փորձի և հիշողության շերտավորումները կարևորվում են նաև այն պատճառով, որ երիտասարդությանությունը, կրելով տվյալ ժամանակաշրջանի գիտելիքը, առավել ճկուն գործունեություն կծավալի՝ զարգացնելով սոցիալական փոփոխվող իրականությանը հարմարվելու ունակություններ: Սա է այն հիմնարար եղանակը, որի միջոցով հնարավոր կլինի լուծել միջսերնդային փոխազդեցությունների միջոցով սերունդների հերթագայության անընդհատությունն ապահովելու գերակա խնդիրը: Այս խնդիրը դիտվում է, մասնավորապես, ազգային-ազատագրական պայքարի հայեցակարգման դաշտում, որը տեղավորվում է սոցիոլոգիական գիտելիքի այն մակարդակում, որի կվինտեսենցիան համարվում է ազգային-ազատագրական պայքարի հայեցակարգը և դրա հետ կապվող գիտական մեկնաբանությունները: Ազգային-ազատագրական պայքարը, ըստ Ռոզոզինի, «գաղութացված կամ կախյալ ազգերի ազգային ազատագրման և ազատ ու անկախ զարգացման պայքարն է ...» [6]:

Բաֆֆու «Հայ երիտասարդությունը» աշխատությունը ևս ուղղված է այս հարցի ճանաչողական և կիրառական մոտեցումների առաջադրմանը: Խոսելով հայ իրակա-



նությունում ազգային–ազատագրական պայքարի՝ հայի ինքնության պահպանման միջոցի կարևորման մասին, Րաֆֆին նշում է. «Ժողովուրդը ինքն է բողոք բարձրացնում, թե՛ զենքով և թե՛ խոսքով... դրան ասում ենք, թե ազատության զգացմունքը արմատիցն է ծագում, ամբոխի սրտիցն է բխում, ցածրից վեր բարձրանում» [7]:

Անդրադարձ կատարելով երիտասարդության մեջ տիրող ներսերնդային գործընթացներին՝ կարելի է փաստել, որ այդ շրջանի հայ երիտասարդությունը բաժանվում է երկու հիմնական շերտի՝ գյուղաբնակ և քաղաքաբնակ հայ երիտասարդության: Ինչպես արդեն նշվել է, այս երիտասարդությունների հիմքում ընկած են երկու միմյանց չնույնացող և հաճախ հակադրվող էնտելեխիաներ (երիտասարդության առաջին տիպը պահպանողական էնտելեխիայի կրողն է, երկրորդը՝ ազատական): Էնտելեխիաների այսպիսի հակադրությունը հաճախ բարդություն է ստեղծում, որ տեսական մոտեցումներ առաջ քաշվեն՝ այդ երիտասարդություններին ընդհանուր սերնդում ներառելու համար: Սակայն, եթե այդ հարաբերությունները դիտենք ոչ կայուն պայմաններում, որտեղ սոցիալական առօրյա իրականությունը վերածվում է էքզիստենցիալի, ապա պարզ կդառնա երիտասարդ սերունդների՝ հանուն գոյության պահպանման մեկ միության մեջ գործելու անհրաժեշտությունը [2]: Այստեղ, ըստ էության, երկրորդային են դառնում սոցիալական դիրքի հետ կապված էնտելեխիկ հակադրությունները, և սկսում են գործել սեփական գոյության, ազգային ինքնագիտակցության ու ինքնության պահպանման բնազդները: Այս միասնությունը թույլ է տալիս երիտասարդությանը միավորվել մեկ ընդհանուր էնտելեխիայի շուրջ, որի հիմքում ընկած են ազգային–էքզիստենցիալիստական, ազգային–ազատագրական գաղափարները: «Մասնակիցը դառնալ ազգային ինքնության և ինչու չէ՞ նաև սեփական գոյության պահպանմանը»՝ սա է ընկած ազգային–ազատագրական պայքարի հիմքում [8]:

Խոսելով միջսերնդային գործընթացների և հարաբերությունների՝ ազգային–ազատագրական պայքարի կայացման և ազգային ինքնության պահպանման գործում ունեցած դերի մասին՝ անհրաժեշտ է կարևորել փորձի և հիշողության շերտավորման գաղափարներն ազգային գիտակցության մշտական, վերարտադրության և պահպանման գործում: Այդ վերարտադրության հիմքում երիտասարդ և տարեց սերունդների միջև փոխհարաբերություններն են, որոնք հիմնվում են էնտելեխիկ հարաբերությունների վրա: Այդ հարաբերությունները շատ հաճախ դիալեկտիկ հակադրությունների բնույթ ունեն, որտեղ բախվում են երիտասարդության և տարեց սերնդի էնտելեխիաները: Շատ հաճախ բևեռացված և հակադրվող այս էնտելեխիաների ամբողջությունը բնորոշում է դարաշրջանի ոգին: Դարի ոգին ազգային–ազատագրական պայքարի շրջանակներում գործառելու համար պետք է էնտելեխիաների հակադրությունը դնել ոչ թե ապակառուցողական, այլ կառուցողական մակարդակի վրա, որտեղ հակադրությունները կնպաստեն փորձի և հիշողության շերտավորմանը [9]: Վերլուծական էնտելեխիկ մեխանիզմում սա համազգային էնտելեխիկ հիմքի՝ համազգային շահի գաղափարն է, որն այս կամ այն կերպ առկա է թե՛ տվյալ երիտա-

սարդությանը, և թե՛ տարեց սերնդին հատուկ էնտելեկտիաներում: Այս դիտանկյունից ազգային-ազատագրական պայքարը կարող է դիտարկվել որպես սերունդների միավորման և նպատակադրված գործողությունների ամբողջություն, որը հիմնվում է էնտելեկտիկ հիմքի համազգային գիտակցման սկզբունքի վրա: Այս տրամաբանությամբ՝ ազգային-ազատագրական պայքարի հայեցակարգը վերածվում է փուլային գործընթացների շղթայի, որտեղ առաջնային փուլն էքզիստենցիալ իրավիճակի գիտակցումն է (առկա են նաև էնտելեկտիկ հիմքի համազգային գիտակցման, դրա հիման վրա միավորման և կոնկրետ գործողությունների փուլեր), իսկ վերջնական փուլը՝ առաջադիմական արդյունքը: Այստեղ երիտասարդությունը շարժվում է սեփական և առկա փորձի համադրության ճանապարհով՝ ավելի զարգացնելով ներսերնդային և ազգային գիտակցությունը: Այս գիտակցության զարգացումը մշտական սոցիալականացման արդյունք է, որը սկսվում է ընտանիքում՝ հայ երիտասարդի վաղ մանկությունից: 19-րդ դարի հայ իրականության մեջ, որտեղ բացակայում էր հայ ազգային պետականությունը, ավելի էր կարևորվում տարեց սերնդի և ընտանիքի դերը երիտասարդների ազգային ոգու և գիտակցության ձևավորման գործում: Տարեց սերունդը դառնում է սոցիալական այն միավորը, որը որդեգրելով որոշակի քաղաքականություն, նպաստում է ազգային գիտակցության ձևավորմանը: Այսպիսով, սերունդների փոխհարաբերությունները վերածվում են սոցիալական փորձի և հիշողության կուտակման՝ շերտավորման և սերունդների հերթափոխի բարդ գործընթացի: Գործընթաց, որում տարեց սերունդն առաջ է բերում նոր սերունդ՝ երիտասարդություն, որը տարեց սերնդի կուտակած անցյալի և սեփական փորձի համադրմամբ կառուցում է իր ինքնագիտակցությունը: Սա է այն ճանապարհը, որը նոր սերնդի մոտ զարգացնում է ազգային գիտակցությունը, դնում այն կառուցվածքային առավել բարձր մակարդակի վրա՝ նպաստելով այդ գիտակցության հետագա վերարտադրմանը [10]:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Վերմիշյան Հ.**, «Հայ սոցիոլոգիայի պատմություն. XIX դարավերջ-XX դարասկիզբ», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 16-25:
- [2] **Мангейм К.**, “Проблема поколений” «Кельнский ежеквартальник по социологии», 1928, сс. 13-9, 16, 35-6, 32-3.
- [3] **Րաֆֆի** «Հայ կինը եւ հայ երիտասարդութիւնը», Թիֆլիս, Արօր, 1890, 222 էջ:
- [4] **Mead M.**, Culture and Commitment. A Study of the Generation Gap, New York, 1970, 113 p.
- [5] **Ницше Ф.**, «О пользе и вреде истории для жизни», том 1, издательство «Мысль», Москва, 1990, сс. 16-7.
- [6] **Рогозин О. К.**, Война и мир в терминах и определениях: военно-политический словарь, Вече Москва, 2004, с. 41.

[7] **Րաֆֆի**, «Դեռ եւս ուշ չէ». Բանասիրական, «Մշակ» - 41, Թիֆլիս, 15 մարտ 1878, էջ 1:

[8] **Макулин А.**, История философии, Архангельск, 2013, сс. 364–72.

[9] **Սարուխանյան Ն.**, «Րաֆֆին և Հայկական հարցը». Պատմա-բանասիրական հանդես, № 3, 2015, էջ 99-107:

[10] **Մակարյան Լ. Բ.**, «Րաֆֆին որպես ազգային-ազատագրական շարժման գաղափարախոս», Բանբեր Երևանի համալսարանի 3 (69), ԵՊՀ, 1989, էջ 159-64:

Ենգիդունյան Վահան

**19-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋՍԵՐՆԴԱՅԻՆ  
ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ ՐԱՖՖՈՒ «ՀԱՅ  
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

**Բանալի բառեր՝** ազգ, ազգային-ազատագրական պայքար, սերունդ, երիտասարդություն, ստատիկա, դինամիկա, էնտելեխիա, ստրատիֆիկացիա:

Հիմք ընդունելով Րաֆֆու «Հայ երիտասարդությունը» աշխատանքի և սերունդների փոխհարաբերման խնդիրը՝ սույն ուսումնասիրության նպատակն է սոցիոլոգիական մոտեցումների համադրական վերլուծության միջոցով պարզել 19-րդ դարի հայ երիտասարդության և միջսերնդային փոխազդեցությունների կառուցվածքային բնույթը՝ առաջարկելով այդ ժամանակաշրջանի հայ իրականությանը հատուկ՝ ներսերնդային և միջսերնդային փոխազդեցությունների վերլուծության մոդել: Հետազոտության շրջանակներում կառուցվում է ներսերնդային և միջսերնդային փոխազդեցությունների վերլուծության էնտելեխիկ մոդել, որը հիմնված է սերունդների ֆիզուրատիվ կառուցվածքի և ներքին նպատակադրումների վրա: Արդյունքում պարզվել է, որ այդ ժամանակաշրջանի հայ երիտասարդության ներսերնդային կառուցվածքն ունի էնտելեխիկ բնույթ:

Енгидунян Ваган

## **СТРУКТУРНАЯ ПРИРОДА АРМЯНСКИХ МОЛОДЁЖНЫХ И МЕЖПОКОЛЕНЧЕСКИХ ВЗАИМОДЕЙСТВИЙ В ДЕВЯТНАДЦАТОМ ВЕКЕ В РАБОТЕ РАФФИ «АРМЯНСКАЯ МОЛОДЕЖЬ»**

**Ключевые слова:** нация, национально-освободительная борьба, поколение, молодежь, статика, динамика, энтелехия, стратификация.

Цель данной статьи – выявить внутр поколенческую и межпоколенческую структурную природу армянских молодёжных и межпоколенческих взаимодействий в 19-ом веке с помощью сравнительного анализа идей Раффи, представленных в работе «Армянская молодежь», с помощью социологических подходов, связанных с проблемой взаимосвязи поколений. Для анализа внутр поколенческих и межпоколенческих взаимодействий в армянской реальности того времени была создана энтелехическая модель, основанная на образной структуре поколений и внутренних целях, а также было выяснено, что внутр поколенческая структура армянской молодёжи того времени имела энтелехическую природу.

Engidunyan Vahan

## **STRUCTURAL NATURE OF ARMENIAN YOUTH AND INTERGENERATIONAL INTERACTIONS IN THE 19<sup>TH</sup> CENTURY IN RAFFI'S 'ARMENIAN YOUTH'**

**Keywords:** nation, national liberation struggle, generation, youth, statics, dynamics, entelechy, stratification .

The aim of this article is to find out the intragenerational and intergenerational structural nature of the Armenian youth and intergenerational interactions in the 19<sup>th</sup> century through the comparative analysis of Raffi's reflection on the Armenian youth with the help of sociological approaches related to the problem of generations. We have developed a conceptual model aimed at the analysis of intragenerational and intergenerational interactions in an Armenian reality of that time. In the research, we have built an entelechitic model based on the figural structure and internal goals. We have found out that the intragenerational structure of the Armenian youth at that period had an entelechitic nature.